



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13356

13357

13358

13359

13360

342

U 23

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն
Ս Ը Ն Մ Ը Ն Ը Գ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Գ Ջ Ա Յ Ո Ց Կ,

1860

Գ. Գ. Կ. Կ. Կ. (Կ. Կ. Կ. Կ.)

Printed in Turkey

342(=9) *այ*

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

4-93

Մ Ը Հ Ս Ը Ն Ը Դ Բ Ո Ի Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ո Ց

այ

Ի Հ Ա Յ Բ Ա Պ Ե Տ Ո Ի Թ Ե Ա Ն

Տ Ե Ա Ռ Ն Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի Ս Բ Բ Ա Ջ Ա Ն Կ Ա Ք Ո Ւ Դ Ի Կ Ո Ս Ի

Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց

Ի Գ Ա Տ Բ Ի Ա Բ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Գ Օ Լ Ի Ս Ո Ց

Տ Ե Ա Ռ Ն Ս Ա Բ Գ Ս Ի Ա Բ Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի



Ի Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Գ Օ Լ Ի Ս

Յ Ա Ջ Դ Ա Յ Ի Ն Տ Գ Ա Բ Ա Ն Ի Ս Ո Ւ Բ Բ Փ Բ Կ Չ Ի Ե Ն Ե Տ Ի Գ Ո Ե Լ Ե

— 1860 —

Պատրիարքական կնքով չվաւերաց-
եալ օրինակաց ճշգրտութիւնն երաշ-
խաւ տեալ չէ :



1857

39

12001



Հիմնական Միջբուհք 7

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Ազգային Վարչութիւն	10
Կազմութիւն	10
Պատասխանատուութիւն	15
Զարարութիւնք	15
1. Կեդրոնական Վարչութիւն	14
ա. Ազգային լրագրողութիւն	14
բ. Պատրիարք	17
գ. Ազգային կրօնական ժողով	19
դ. Ազգային քաղաքական ժողով	21
ե. Ազգային Ուսումնական խորհուրդ	22
զ. Ազգային Տնտեսական խորհուրդ	24
է. Ազգային Երևանական խորհուրդ	27
ը. Ազգային Գաղափարական խորհուրդ	28
թ. Թաղական խորհուրդք	29
ժ. Ազգային Գիտնական	31
2. Գաղափարական Վարչութիւն	34
ա. Գաղափարական լրագրողութիւն	34
բ. Առաջնորդ	34
գ. Գաղափարական ժողովք և խորհուրդք	35

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Ազգային Տուրք 36

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Ընտրու թիւն	57
ա. Ընտրական օրէնք	57
1. Ընտրութեան արարմանք	57
2. Ընտրելու թեւան արարմանք	59
բ. Ընտրու թիւն ազգային կըրտութեանաց	59
Ընտրութեան փոքրութիւնք	40
Քուէարկու թիւն	45
Քուէեանաց	44
Վաւերացու թիւն ընտրու թեւանց	45
գ. Ընտրու թիւն Պատրիարքի	47
դ. Ընտրու թիւն Առաջնորդաց	50
է. Ընտրու թիւն Ժողովականաց և խորհրդա- կանաց	51

Գ Լ Ո Ւ Խ Դ .

Ներքին Վանականութեանց Ժողովոց և խորհրդոց	52
ա. Պաշտօնական Վանակք	52
բ. Աստուծական Վանակք	54

Գ Լ Ո Ւ Խ Ե .

Վերաբնութեան Վանականութեան	57
--------------------------------------	----



Printed in Turkey

Ա Ջ Դ Ա Յ Ի Ն

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Դ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն Ս Կ Ջ Բ Ո Ւ Ն Բ

=

Ա .

Ա Ջ Դ Ի Ն ամեն մէկ անհատն՝ առ Ազգն պարտաւորութիւններ ունի . Ազգն ալ իր կողմէն առ ազգային ամեն մէկ անհատ պարտաւորութիւններ ունի . դարձեալ ամեն մէկ անհատ իրաւունքներ ունի Ազգէն և Ազգն անհատներէն :

Այս պարտիքներն որոշող և այս իրաւունքներն հաստատող իշխանութիւնն ազգային Վարչութիւն կկոչուի, որում Օսմանեան Տէրու-

Թե՛ն է՛ն յառուկ արտօնու թեամբ յանձնեալ է
Տաճկաստանի Հայոց Եկեղբին գործոց անօրէ-
նու թիւնն :

Բ .

Ազգային Արչու թիւնն հիմնեալ է իրաւանց
ու պարտեաց սկզբունքին վրայ, որ արդարու-
թեան սկզբունք է . իր ուժն ձայնից բազմու-
թեան մէջ կկայանայ, որ օրինաւորութեան
սկզբունք է : Ամենայն անօրէնութիւն ազգա-
յին՝ որ չէ համաձայն սոյն սկզբանց, ո՛չ ար-
գար է և ո՛չ օրինաւոր :

Գ .

Ազգն ու ազգային Արչութիւնն փոխա-
գարձ պարտիքներով կապուած են իրարու հետ :

Դ .

Ազգայնոց պարտականութիւնն է՝ Ազգին պի-
տոյիցն պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ՝
իւրաքանչիւրն իր կարողութեան չափովն .
Ազգին խնդրած ծառայութեանցն յանձնա-
ռու ըլլալ, և ազգային Արչութեան բրած
անօրէնութեանցն ազգասիրաբար հնազանդիլ :


Ե .

Ազգային Արչութեան պարտականու-
թիւնն է՝ Ազգին բարոյական, մտաւորական և

նիւթական պիտոյիցն հոգ տանիլ, Հայաստանե-
կայց Սուրբ Եկեղեցւոյ գաւանթութիւնն ու ա-
ւանդութիւններն անխախտ պահել, մարդկու-
թեան հարկաւոր եղած անհրաժեշտ գիտել-
եաց ուսումն՝ Ազգին ամեն աստիճանի թէ՛ մանչ
և թէ՛ ազջիկ տղայոց հաւասարապէս ծաւա-
լել, ազգային հաստատութիւններն պայծառ
պահել, Ազգին հասոյթներն օրինաւոր կերպով
աւելցնել և ծախքերն իմաստութեամբ անտե-
սել, Ազգին ծառայութեանն մշտնջենապէս
նուիրեալ անձանց կացութիւնն լաւցնել և ա-
պագան անգորբել, կարօտելոց խնամ տանիլ
հայրաբար, ազգայնոց մէջ ծագած վէճերն
արդարութեամբ խաղաղել, և վերջապէս
Ազգին բարեկարգութեանն ու յառաջագի-
մութեանն աշխատութիւն շինայել :

2.

Ե՛հա այս ամեն պարտիքներն կատարելու և
իրաւունքներն ապահովելու գիտմամբ է որ
Ազգն հետեւեալ կերպով կաահմանադրէ զազ-
գային գործոց վարչութիւնն :



=

Ս-Լ-Ի-Ն :

1. (Նարձրագոյն Դրան շնորհած արտօնութեանն համեմատ՝

Վզգային Վարչութիւնն երեսփոխանական է :

Վզգն ընդհանուր ժողովով մի կներկայանայ և անոր միջնորդութեամբն կվարէ զազգային իշխանութիւնն :

Ընդհանուր ժողովն՝ Վզգին ընդհանրական գործոց անօրէնութիւնն իրեն պահելով, սովորական գործոց վարչութիւնն երկու ազգային ժողովներու կյանձնէ, կրօնական գործոց մասն՝ կրօնական Ժողովի մի, քաղաքական գործոց մասն՝ քաղաքական Ժողովի մի. իսկ խառն գործոց անօրէնութիւնն՝ այս երկու ժողովոց առժամանակեայ մէկ տեղ գալովն ձեւաջաճ խառն Ժողովին կյանձնէ :

2. Վզգային վարչութիւնն՝ աշխատութեանց բաժանումն բարեկարգութեան առաջին պայման բանելով, ազգային գործոց մէջ՝ (տեսչութիւնն ու մատակարարութիւնն իրարմէ կզատէ երկու կարգ խորհրդներու միջոցով :

Տեսչութեան համար՝ ազգային գործոց գըլխաւոր մասերուն յատկացեալ չորս ազգային խորհուրդ կհաստատէ, որ են՝ Ուսումնական խորհուրդ, Տնտեսական խորհուրդ, Ելեմտական խորհուրդ, Գատաստանական խորհուրդ, և վաւերագործութիւնն իրեն պահելով այս խորհրդներուն իւրաքանչիւրին ձեռնհասութեանն կյանձնէ ազգային գործոց այս իւրաքանչիւր մասին տեսչութիւնն:

Մատակարարութեան համար՝ Պօլսոյ մէջ Թաղական խորհրդներ կհաստատէ Թաղին եկեղեցւոյն անուամբն, և ամեն մէկ Թաղին տեղական գործոց և հաստատութեանց մատակարարութիւնն իր Թաղական խորհրդին կըյանձնէ, Ազգային խորհրդոց տեսչութեանն տակ:

3. Ազգային վարչութեան պաշտօնական գլուխ՝ Պօլսոյ Պատրիարքն է, և կեդրոն՝ Պօլսոյ Պատրիարքարանն:

Ազգային Ժողովներն ու խորհրդներն իրենց գլուխ ունելով Ազգին Պատրիարքն՝ Պօլսոյ մէջ ազգային Վարչութեան կեդրոնական մասն կկազմեն, որոյ իշխանութիւնն բոլոր Տաճկաստանի Հայոց վրայ կտարածուի:

4. Ազգային կեդրոնական Վարչութիւնն Տաճկաստանի առաջնորդանիստ գաւառներուն մէջ կներկայանայ Գաւառական Ժողովներով, որոնք Պօլսէն դուրս Ազգային վարչութեան

դաւառական մասն կկազմեն, որոյ պաշտօնա-
կան գլուխ՝ փիճակին Առաջնորդն է, և կեդրոն՝
տեղին Առաջնորդարանն :

5. Գաւառական վարչութիւնն նոյն փոխա-
դարձ պարտեզք կապուած է գաւառաբնակ
ազգայնոց հետ, ինչպէս կեդրոնական Վար-
չութիւնն ընդհանուր ազգայնոց հետ, և իրեն
յարացոյց պիտի բանէ զկեդրոնական Վարչու-
թիւնն :

6. Գաւառական վարչութիւնն առաջնոր-
դանիստ քաղաքներու մէջ Արժնական և Բա-
ղաքական Ժողովներ կհաստատուէ և անոնց կը-
յանձնէ գաւառին կրօնական և քաղաքական
գործոց տեսչութիւնն :

Այս Ժողովներն քաղաքին Թաղերուն մէջ
Թաղական խորհրդներ կհաստատուեն իրենց
վերատեսչութեանն ու համարառութեանն տակ
և անոնց ձեռքովն կմատակարարեն տեղական
գործերն, նոյն յարաբերութիւններով որով
կվարուին Արժնական Ժողովներն Պոլսոյ Թա-
ղական խորհրդոց հետ :

Վճանապէս իրենց վերատեսչութեանն ու
համարառութեանն տակ Թեմական խորհրդ-
ներ կհաստատուեն, և ամեն մէկ Թեմին տեղա-
կան գործոց և հաստատութեանց մատակարա-
րութիւնն իր Թեմական խորհրդին կյանձնեն :

Պատմութեան Բնութիւն :

7. Իւրաքանչիւր ժողով և խորհուրդ իր մասին մէջ ձեռնհաս է՝ համարապատուութեան պայմանով .

Գաւառական վարչութեան մէջ՝ Թաղական ու Թեմական խորհրդներն համարապատու են Գաւառական ժողովներուն . Գաւառական ժողովներն համարապատու են գաւառական Ընդհանուր ժողովներուն . Գաւառական վարչութիւնն կեդրոնական Վարչութեան համարապատու է , և Առաջնորդն Պատրիարքին :

Կեդրոնական վարչութեան մէջ՝ Պօլսոյ Թաղական խորհրդներն համարապատու են ազգային Տեսուչ խորհրդներուն ըստ իւրաքանչիւր մասին . Տեսուչ խորհրդներն համարապատու են ազգային Բաղադրական ժողովին՝ բաց ի Դատաստանական խորհրդէն որ համարապատու է Խառն ժողովին :

Կրօնական ու Բաղադրական ժողովներն և Պատրիարքն Ընդհանուր ժողովին համարապատու են :

Ընդհանուր ժողովն բարոյապէս պատասխանատու է Ազգին առջև :

Յարութեան Բնութիւն :

8. Ազգային վարչութեան՝ Ազգին հետ , Արարատեան մայր Աթոռին հետ , Բարձրագոյն

Դրան հետ ունեցած յարաբերութիւններն սասկզգրանց վրայ հիմնեալ պիտի ըլլան .

Ազգին և ազգայնոց հետ՝ միշտ հայրաքար վարուիլ :

Արարատեան մայր Աթոսին հետ՝ աւանդապահ մնալ միշտ նոյն յարաբերութեանց որոնցմով նախնեացմէ անտի կապուած են իրարու հետ Ազգն ու Աթոսն :

Բարձրագոյն Դրան հետ՝ Թէ Ազգին և Թէ ազգայնոց կրօնական ու քաղաքական իրաւունքներն պահպանելու համար Տէրութեան պաշտպանութիւնն խնդրել, և Ազգին հպատակութիւնն հաւատարիմ պահել առ Տէրութիւնն :

Սոյն յարաբերութեանց միջնորդ Պատրիարքն է :

1. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ա. Ազգային Ընդհանուր Ժողով :

Գ. Ազգային Ընդհանուր Ժողովն կբաղկանայ 220 ազգային երեսփոխաններէ, որոնցմէ 160ն պիտի ըլլայ Պօլսոյ Թաղերուն եկեղեցեաց կողմէն ընտրեալ, և 60ն առաջնորդանիստ գաւառներուն կողմէն ընտրեալ :

Ընդհանուր Ժողովին մէջ ազգային երեսփոխանաց անդամակից են .

Նախ՝ ազգային կեդրոնական Վարչութեան

անդամներէն՝ կրօնական ու քաղաքական ժողովներուն և շորս Տեսուչ խորհրդներուն անդամներն ու Թաղական խորհրդներուն ատենապետներն :

Այս կարգի անդամոց Թիւն իբր 100 է . բայց այս Թիւն երեսփոխանաց Թիւին վրայ Ճշգիւ չի կրնար աւելցուիլ, վասն զի ասոնց մէջ արդէն երեսփոխան ընտրուածներու կրնան գտնուիլ :

Երկրորդ՝ Ազգին կամ Տէրութեան ծառայութեանցն մէջ գլխաւոր պաշտօնով մի պատուեալ անձինք որոնց արժանաւորութիւնն Ազգին կամ Տէրութեան կողմէն վկայեալ կհամարուի, ինչպէս են Եկեղեցական դասէն՝ Պօլիս գանուող եպիսկոպոսներն, Պօլսոյ եկեղեցեաց քարոզիչ վարդապետներն ու աւագերէցներն . Բւսումնական դասէն՝ ազգային մատենագիրներ, վկայեալ բժիշկներ, գլխաւոր դասատուներ, լրագրապետներ . քաղաքական դասէն՝ վերին պաշտօնաւորաց աստիճանակիցներ, արքունի ժողովոց անդամներ, Բարձրագոյն Դրան դիւաններուն մէջ անօրէններ և Թարգմանապետներ, ազգային կամ արքունի հաստատութեանց մէջ անօրէններ, ուսումնապետներ . Զինուորական դասէն՝ վերին սպայից աստիճանակիցներ :

Այս կարգի անդամոց Թիւն ալ չի կրնար Ճշգուիլ վերոյիշեալ պատճառով . բայց իբր սկզբունք՝ այս երկու կարգի անդամոց բովան-

գակ Թիւն երբէք չպիտի հաւատարի երեսփոխանաց Թիւին (1) :

10. Բնդհանուր ժողովն է՛ն շատն 400էն աւելի անդամ չպիտի ունենայ , և քանի որ երեսփոխանաց մեծագոյն մասն այսինքն 111ն գօնէ ներկայ չըլլայ , նիստ չպիտի կարենայ ընել :

11. Բնդհանուր Ժողովին պաշտօնն է՛ Ազգին կողմէն երեսփոխանութեամբ ազգային բարձր պաշտօնաւորներն ընտրել , Ազգային ժողովներն կարգել , անոնց վարչութեանն համարառու ըլլալ , և ազգային ծանր կամ ընդհանրական գործերն վճարար տնօրինել :

Իր պարտաւորութիւնն է՛ ազգային Սահմանադրութեան սկզբունքներն անխախտ պահել և անոնց արամադրութեանցն համեմատ վարուիլ :

12. Բնդհանուր ժողով կգումարուի .

Ղախ՝ կանոնաւորապէս ամեն տարի մարտ ամսուն վերջերն ազգային Վարչութեան տարեկան ընդհանուր համարատուութիւնն մտիկ ընելու , ազգային ժողովականաց կէսին ընտրութիւնն ընելու և ազգային տարեկան տուրքին տնօրէնութիւնն հաստատելու համար : Սոյն տարեկան նիստին մէջ վարչութեան անդամներն՝ տուրքի խնդիրէն զատ՝ միւս խնդիր-

1 Այս Զօրումն վերաբնեցի է , երբ թէ՛ ազգային և թէ՛ Տէրութեան պաշտօնաւորաց Թիւն այն աստիճան աւելնոց որ անկարելի ըլլոց այն համեմատութիւնն պահել :

ներսւն մէջ խօսք միայն ունին և ոչ քուէ :

2⁷. Կաթուղիկոսի ընտրութեան մասնակից ըլլալու համար :

3⁷. Կրօնազէմայ և Պօլսոյ Պատրիարքաց ընտրութեանն համար :

4⁷. Կրօնական ու Քաղաքական ժողովոց մէջ կամ Պատրիարքին ու ժողովոց մէջ պատահած անհամաձայնութեանց համար : Սոյն պարագայից մէջ ալ Վարչութեան անդամներն խօսք միայն ունին և ոչ քուէ :

5⁷. Ազգային Սահմանադրութեան վերաբնութեանն համար :

Եւ վերջապէս արտաքոյ կարգի պատահած այնպիսի ծանր խնդիրներու համար, զորոնք Ազգային ժողովներն ընդհանուր ժողովով որոշել հարկաւոր դատեն :


13. Ընդհանուր ժողով կհրաւիրեն, նախ՝ Պատրիարքն՝ Ազգին կողմէն, երկրորդ՝ ընդհանուր ժողովին ատենապետն՝ սոյն ժողովին գիւանին կողմէն, երրորդ՝ Կրօնական կամ Քաղաքական ժողովին ատենապետներն՝ սոյն ժողովոց կողմէն :

857
39

Է. Պատրիարք :

14. Պատրիարքն Ազգային ժողովոց նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնն կկարէ :

15. Պատրիարքն իրեն եկած ամեն գործ՝ որ



ժողովին ձեռնհասութեանն ապէ է նէ՝ նոյն ժողովին քննութեանն ու որոշմանն պիտի յանձնէ, և ազգային որոշմանց մէջ իր պաշտօնական գրութիւնքն անվաւեր պիտի համարուին եթէ ձեռնհաս ժողովին կողմէն ալ կնքեալ կամ ստորագրեալ չըլլան . իսկ երբ ստիպողական գործ մի պատահի, որոյ անօրէնութիւնն չներկսպասել մինչև ժողովոց գումարման օրն և արտաքոյ կարգի ժողով գումարել կարելի չըլլայ, Պատրիարքն կրնայ ինքնին անօրինել՝ պատասխանատուութիւնն իր վրայ առնելով, բայց եղելութիւնն կանոնաւոր կերպով միշտ արձանագրել տալով ձեռնհաս ժողովին պէտք է որ իմացնէ առաջիկայ նխաին մէջ զանի վաւերացնել տալու համար :

16. Պատրիարքն իր բացակայութեան անն Ազգային ժողովներու մէջ արուած որոշում մի շտորագրած՝ իրաւունք ունի գիտողութիւն ընելու և խնդիրն կրկին քննութեան առնել տալու . իսկ երկրորդ որոշումէն ետքն պարտաւորեալ է ստորագրելու՝ եթէ այն որոշումն Սահմանագրութեան արամագրութեանցն անհամաձայն չըլլանէ :

17. Պատրիարքն իրաւունք ունի Սահմանագրութեան արամագրութեանցն համեմատ չլարուող ազգային գործակալ մի, այսինքն՝ եկեղեցական մի, վարժապետ մի, եկեղեցւոյ, վանքի, գաղութան կամ հիւանդանոցի մատա-

կարար մի, իր պաշտօնէն հանելու կամ արգիլելու առաջարկութիւն ընել որում որ անկէ :

18. Պատրիարքն իրաւունք չունի Ազգային Ժողովներն կամ խորհրդներն ինքնին լուծելու. բայց երբոր տեսնէ թէ սոյն Ժողովներն Սահմանադրութեան հակառակ ընթացքի մի մէջ են, առջի անգամին՝ անսոց ատենապետին հետ կրանակցի բացատրութիւն ուղեւ լու համար. երկրորդին՝ գրով իմաց կուտայ նոյն Ժողովին իր ապօրինաւոր ընթացքն և ի կարգ կհրաւիրէ զանի. իսկ երրորդին՝ Ընդհանուր Ժողով կկոչէ եթէ ամբաստանելին Ազգային Ժողովներէն մէկն է, կամ Քաղաքական Ժողովին կգիմէ եթէ խորհրդներէն մէկն է, և պատճառներն իմացնելով ամբաստանեալ Ժողովին լուծումն կպահանջէ :

19. Պատրիարքն ազգային սնտուկէն իրեն յատկացեալ ամսական մի պէտք է ունենայ, և Պատրիարքարանին ներքին մատակարարութեան պահանջած ծախքն իր վրայ բլլայ :

Կ. Ազգային Կրօնական Ժողով.

20. Կրօնական Ժողովն 14 բանիրուն եկեղեցականներէ կբաղկանայ :

21. Կրօնական Ժողովին պաշտօնն է՝ ազգային կրօնական գործոց ընդհանուր տեսչութիւնն :

Իր պարտաւորութիւնքն են՝ Ազգին մէջ

կրօնական զգացումն զարգացնել, Հայաստանե-
կայց Սուրբ Եկեղեցւոյ դաւանութիւնն ու ա-
ւանդութիւնքն անխախտ և անարատ պահել,
եկեղեցեաց և եկեղեցականաց բարեկարգու-
թեանն հսկել, քահանայից կացութիւնն լաւ-
ցնելու և ասպագան անդորրելու հոգ տանել, ար-
ժանաւոր ու բանիրուն եկեղեցականներ հաս-
ցնել, և Ազգին մէջ ծագած կրօնական վէճերն
քննել ու լուծել :

22. Երբ պատահի կրօնական այնպիսի ծանր
խնդիր մի, զոր Արօնական Ժողովն չկարենայ
լուծել, Ընդհանուր Ժողովին բաղմական գըտ-
նուող եկեղեցականաց հետ համագումար ժո-
ղով պիտի կազմէ. եթէ այն համագումար ժո-
ղովն ալ իր ձեռնհասութենէն վեր դատէ ըզ-
խնդիրն, Արարատեան Մայր Աթոռին պէտք է
գիմէ :

23. Թէ մայրաքաղաքիս և թէ գաւառնե-
րու մէջ վարդապետի և քահանայի ձեռնադ-
րութեան հրամանն Արօնական Ժողովէն կարը-
ուի :

24. -Քանի որ եկեղեցւոյ մի Ժողովուրդն
աւելի քահանայի մի հարկաւորութիւնն չզգայ
և Թաղական Խորհրդին միջնորդութեամբն չը-
խնդրէ, նայն Թաղին եկեղեցւոյն համար քա-
հանայի ձեռնադրութեան հրաման չպիտի արը-
ուի :

25. Պօլսոյ եկեղեցեաց քարոզիչ վարդա-

պեաններն ու աւագերեկացներն Արօնական Ժողովն կորոչէ, և Պատրիարքն կանուանէ :

26. Արօնական Ժողովին սրբազան պարտաւորութիւնն է հսկել որ՝ հոգեւոր պաշտօններն ձրի կատարուին և հոգեւոր պաշտօնեայք եկեղեցիէն ապրին :

Գ. Ազգայն Բաղարական Ժողով :

27. Քաղաքական Ժողովն 20 քաղաքագէտ աշխարհականներէ կբաղկանայ :

28. Քաղաքական Ժողովին պաշտօնն է՝ ազգային քաղաքական գործոց ընդհանուր վերատեսչութիւնն :

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային խորհրդներուն կողմէն իրեն մատուցուած ազգօգուտ առաջարկութիւններն ուշի ուշով քննել և կարեւորութիւնն յայտնուելէն ետքն հաստատել զանոնք և անոնց գործադրութեանն արգելքներն՝ եթէ կան՝ բառնալու հոգ տանիլ, և Ազգին բարեկարգութեանն ու յառաջագիւժութեանն ըստ ամենայնի փոյթ ունենալ :

29. Քաղաքական Ժողովն իրեն եկած գործերն՝ որ խորհրդին վերաբերեալ է նէ, նոյն խորհրդին քննութեանն պէտք է յանձնէ, և անոր կարծիքն շառած շնորհիւնէ :

30. Քաղաքական Ժողովն կրնայ՝ բանաւոր պատճառով մի՝ չհաստատել կամ ետ ձրեղել խորհրդի մի ըրած որոշումն, բայց՝ անոր

ձեռնհասութիւնն յարգելով՝ չպիտի կարե-
նայ նոյն որոշման ներհակ որոշում և դոր-
ծագրութիւն ընել :

31. Քաղաքական ժողովն իրաւունք չու-
նի զԱզգային խորհրդներէն մէկն լուծելու,
քանի որ Սահմանադրութեան արամագրու-
թեանցն հակառակ ընթացքի մէջ չտեսնե՛զ զա-
նի . իսկ եթէ պատահի այսպիսի պարագայ
մի, առջի անգամին՝ անոր ատենապետէն բա-
ցատրութիւն կուզէ, երկրորդին՝ գրով իմաց
կուտայ խորհրդին և կարգի կհրաւիրէ զանի,
իսկ երրորդին՝ կլուծէ . բայց Ընդհանուր ժո-
ղովին արուելու տարեկան տեղեկագրին մէջ
այս լուծման պատճառներն պէտք է որ բա-
ցատրէ :

32. Երբ պատահի քաղաքական այնպիսի
ծանր խնդիր մի զոր քաղաքական ժողովն իր
ձեռնհասութենէն վեր դատէ, Ընդհանուր ժո-
ղովին պէտք է որ դիմէ :

Ե . Ազգային Ուսումնական խորհուրդ :

33. Ուսումնական խորհուրդն 10 ուսում-
նական աշխարհականներէ կբաղկանայ :

34. Ուսումնական խորհրդին պաշտօնն է՝
ազգային դատախարակութեան ընդհանուր տես-
չութիւնն :

Իր պարտաւորութիւնքն են՝ ազգային վար-

Ժարանաց բարեկարգութեանն հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնագիր մի և դպրոցական կանոններ հաստատել, և անոնց համեմատ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակ ընթաց մի որոշել թէ՛ ուսման և թէ՛ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսումն ծաւալել, ազգական դաստիարակութեանն յատուկ կերպով հոգ տանիլ, սոյն նպատակով հաստատեալ ընկերութեանց խրախոյս տալ և ձեռնառու ըլլալ, ազգային դաստիարակաց կացութիւնն լուսնելու և ապագան անդորրելու խնամ տանիլ, Ազգին մէջ բանիքուն դասաւաններ հասցնելու և դպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ :

35. Սուսումնական խորհուրդն պէտք է իր կողմէն ամենայն ջան ի գործ դնէ որ թէ՛ Պօլսոյ և թէ՛ դաւաաներու մէջ ամեն թաղ սկզբնական դաստիարակութեան դպրոցներ ունենան, նոյնպէս Պօլիս և առաջնորդանիստ քաղաքներն մէյմէկ ազգային ուսումնարան ունենան դասական ուսմանց համար : Այս ուսումնարաններէն վկայականով կելլեն աշակերտներն, և մասնաւոր ուսմանը ընդունելուն՝ դասատուութեան վկայագիր ալ կտրուի :

36. Սուսումնական խորհուրդն կորոշէ ազգային վարժարանաց մէջ ընդունուելու դասագիրքներն ու դասաւաններն . իսկ քրիստոնէական վարդապետութեան դասագիրքն ու

դասատուն Արօնական Ժողովէն պէտք է որ խնդրէ :

37. Աւսումնական խորհուրդն կնախագահէ ազգային վարժարանաց տարեկան քննութեանն. իսկ քրիստոնէական վարդապետութեան մասին քննութիւնն Արօնական Ժողովին ձեռօքն կրլլայ :

Գ. Ազգային Տնտեսական խորհուրդ :

38. Տնտեսական խորհուրդն 10 անտեսադէտ աշխարհականներէ կբաղկանայ :

39. Տնտեսական խորհրդին պաշտօնն է՝ ազգային հաստատութեանց և կալուածաց մատակարարութեան քնդհանուր տեսչութիւնն :

Իր պարտաւորութիւնն է՝ սոյն հաստատութեանց պայծառութեանն ու բարեկարգութեանն հոգ տանիլ :

40. Տնտեսական խորհուրդն վանօրէից և հիւանդանոցի համար մասնաւոր հոգաբարձութիւններ կհաստատէ և անոնց միջնորդութեամբն կմատակարարէ զայս հաստատութիւններն :

41. Վանօրէից հոգաբարձութիւնն եօթն հոգիէ կբաղկանայ, որոնց երեքն եկեղեցական և չորսն աշխարհական :

Տնտեսական խորհուրդն կընօրէ զայս հոգաբարձուներն և Քաղաքական Ժողովին հաւանութեամբն Պատրիարքն կանուանէ :

42. Ս անօրէից հոգարարձութեան նպատակն պիտի ըլլայ սոյն հաստատութեանց եկամուտներն ու հասոյթներն Ազգին օգտին ծառայեցնել. նախ՝ վանօրէից մէջ ուսումնարան հաստատելով՝ Արծնական ժողովին և Ուսումնական խորհրդին տուած հիմնադրին համաձայն, և որու մէջ որ պէտք կայ՝ հիւանդանոց, տպարան, թանգարան :

43. Ս անօրէից հոգարարձութիւնն իւրաքանչիւր վանքի համար երկերկու գործակալ պէտք է ունենայ տեղացի, որոնք վանահօր նախագահութեամբն կմտտակարարեն զվանքն՝ Գաւառական ժողովէն անկախ կերպով :

44. Հիւանդանոցի հոգարարձութիւնն եօթն հոգիէ կրաղկանայ որոնց երկուքն բժիշկ :

Տնտեսական խորհուրդն կրնարէ այս Հոգարարձուներն և Քաղաքական ժողովին հաստատութեամբն Պատրիարքն կանուանել :

45. Հիւանդանոցի հոգարարձութեան նրպատակն պիտի ըլլայ սոյն հաստատութիւնն իր նպատակին ծառայեցնել, հոն անօրինելով նախ՝ կանոնաւոր Հիւանդանոց մի աղքատ հիւանդաց համար. երկրորդ՝ Պատասարան մի ծեր ու անկար աղքատաց համար. երրորդ՝ Զգատարան մի անառակաց համար. չորրորդ՝ Արթարան մի որք ու անտէրուչ աղայոց համար :

Այս օթեվաններուն իւրաքանչիւրն թէ՛ շէնքի և թէ՛ կարգի կողմէն բժշկական կանոնաց

և առողջապահ օրինաց համաձայն պէտք է կարգադրեալ ըլլայ :

46. Կաակաց անօրէնութիւնն Տնտեսական խորհրդին կլերաբերի : Այս խորհուրդն պէտք է հսկէ որ ամեն կաակ օրինաւոր կերպով վաւերացեալ ըլլայ, կաակողին գիտաւորութիւնն անխախտ պահուի և գործադրութիւնն ապահով ըլլայ :

Սոյն տրամադրութեանց համեմատ՝ կաակի վերաբերեալ յատուկ կանոններ ու մասնաւոր Հոգաբարձութիւն պէտք է հաստատէ Տնտեսական խորհուրդն :

Երբ կաակին գործադրութիւնն կաակողին գիտաւորութեանն համեմատ չըլլայ, ընտանիքն իրաւունք ունի բողոքելու :

47. Թէ Պօլսոյ և Թէ գաւառներու մէջ գանուած ազգային անշարժ ստացուածոց կալուածագիրներուն (Սէնէք, Հէօմէլ, Ֆէրու) օրինակներն Տնտեսական խորհրդին ձեռքով ժողովուելով ազգային Ղբւանատան մէջ պիտի պահուին ամենայն ապահովութեամբ :

48. Տնտեսական խորհուրդն պէտք է հսկէ որ ամեն ազգային ստացուած օրինաւոր կալուածագիր ունենայ :

49. Ազգային սր և է կալուածի գնումն ու վաճառումն չի կրնար գործադրուիլ առանց Տնտեսական խորհրդին գիտութեանն, քաղաքական ժողովին հաճութեանն ու Պատրիար-

քին կնքադրութեանն :

Այն արամադրութեանց ուժովն Տիէ՛վէ՛լըն-
Բի-ն ըսուած բանն վերցած է :

50. Պօլսոյ մէջ և շրջականերն ազգային որ
և է շինութիւն կամ նորոգութիւն չի կրնար
սկսիլ առանց Տնտեսական և Ալեմտական
խորհրդոց գիտութեանն ու Բազարական Ժո-
ղովին հաճութեանն :

Նմանապէս ազգային որ և է հաստատու-
թեան համար ստակ չի կրնար Ժողովուրդ առանց
վերոյիշեալ պայմանին :

է. Ազգային Ալեմտական խորհուրդ :

51. Ալեմտական խորհուրդն 10 հաշուագէտ
աշխարհականներէ կազմուածայ :

52. Ալեմտական խորհրդին պաշտօնն է՝ ազ-
գային հասութից և ծախուց ընդհանուր տես-
չութիւնն և ազգային սնտուկին համարակա-
լութիւնն :

Իր պարտաւորութիւնն է՝ ազգային հաստա-
տութեանց մատակարարութեան հաշիւներն
կանոնաւորապէս առնել, ծախուց օրինաւո-
րութիւնն ստուգել, ազգային եկամուտներն
աւելցնելու ջանք ընել՝ այն աստիճան որ օր մի
ազգային սնտուկին մուտն և ելքն իրարու հա-
ւասար գալով ընդհանուր տուրքն մեծապէս
թեթեւնայ :

53. Ազգային սնտուկին մուտքն են գլխաւորապէս՝ տարեկան ընդհանուր տուրք, կալուածական հասոյթ, գիւանական հասոյթ, կրտակ, նուէր և այլն. եւքն են գլխաւորապէս՝ Պատրիարքարանի և Գիւանատան ծախք, Հիւանդանոցի ծախք, կարօտեալ թաղերու եկեղեցեացն ու վարժարանացն նպատակաւ պատահական ծախքեր :

54. Ազգային սնտուկին հաշիւն տօմարակալութեան կանոնով պիտի բանուի :

55. Այլեմտական խորհուրդն տարեգլխէն երկու ամիս առաջ յետագայ տարւոյն մէջ ըլլալու հասոյթն ու ծախքն կշտելով հաշուեցուցակն քաղաքական ժողովին պիտի ներկայացնէ :

Ե. Ազգային դատաստանական խորհուրդ :

56. Դատաստանական խորհուրդն 10 իրաւասէր անձերէ կքաղկանայ, որոնց հինգն եկեղեցական պիտի ըլլայ և հինգն աշխարհական :

57. Դատաստանական խորհրդին պաշտօնն է ազգային դատաստանական գործոց ընդհանուր տեսչութիւնն :

Իր պարտաւորութիւնն է՝ հակառակորդներն արդարութեամբ իրաւախօհ ընելու ջանալ և իր վճիռներուն հիմբունել կրօնական մասին՝ նախնեացմէ աւանդեալ կանոններն, և քաղաքական մասին՝ Տէրութեան դատարա-

նաց արդի կանոններն ։

58. Երբ պատահի այնպիսի խնդիր մի, զոր Գառաատանական խորհուրդն իր ձեռնհասութենէն վեր դատէ, ազգային ժողովներէն որու որ անկէ անոր կղզիէ ։

59. Գառաատանական խորհրդին մէջ դատեալ անձ մի միշտ իրաւունք ունի Արօնական կամ Քաղաքական ժողովին բողոքելու կամ խստն ժողով պահանջելու ըստ գործին ։

Թ. Թաղական խորհրդեր ։

60. Թաղական խորհրդներն կբաղկանան ըստ տեղւոյն 5էն մինչև 9 անդամներէ ։

61. Թաղական խորհրդին պաշտօնն է՝ Թաղին տեղական գործոց մատակարարութիւնն, եկեղեցւոյն եկեղեցականութիւնն, դպրատան հոգաբարձութիւնն, աղքատաց խնամակալութիւնն, ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղութիւնն ։

Իր պարտաւորութիւնն է՝ Թաղին եկեղեցւոյն պայծառութեանն խնամ տանիլ, Թաղին մէջ թէ աղջկանց և թէ աղայոց համար սկզբնական դաստիարակութեան բարեկարգ դպրատաններ ունենալու ջանք ընել, և Թաղին կարօտեալ ընտանեաց ձեռնառու ըլլալ ։

62. Թաղերուն մէջ թէ եկեղեցւոյ և թէ դպրատան ո՛ր և է կալուած Թաղական խորհրդին անմիջական անօրէնութեանն տակ է ։

այսպիսի կալուածոց գնումն ու վաճառումն ըստ 49-երրորդ Յօդուածին կգործադրուի :

63. Ա՛յն Թաղ մէյմէկ անաուկ պիտի ունենայ Թաղական խորհրդին հսկողութեանն տակ :

Այս անաուկին մուտքն են՝ Թաղական ասուրքն, եկեղեցւոյ և դպրատան կալուածոց եկամուտներն, եկեղեցւոյն հասոյթներն, աղքատաց համար եղած նուէրներն ու կտակներն և այլն. եւլքն են՝ Թաղին եկեղեցւոյն և դպրատանց ծախքերն ու աղքատաց օգնութիւններն :

64. Ա՛յն Թաղական խորհուրդ իր Թաղին մէջ եղած ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւնն պէտք է որ ունենայ կանոնաւոր կերպով :

65. Թաղական խորհրդներն իրենց պաշտօններուն մէջ Տեսուչ խորհրդներուն հետ ուղղակի յարաբերութիւն ունին. եկեղեցւանութեան գործերու համար՝ Տնտեսական խորհրդին հետ, դպրատանց ուսումնական մասին համար՝ Ուսումնական խորհրդին հետ, դրամական գործերու համար՝ Արեւմտական խորհրդին հետ, դատական գործերու համար՝ Դատաստանական խորհրդին հետ :

Թաղական խորհուրդն երբ չկրնայ հակառակորդներն իրաւախոհ ընել, գործն Դատաստանական խորհրդին պէտք է զրկէ իր քըն-

Նու թեան տեղեկագրովն :

Ծ. Ազգային Գիւանատուն :

66. Պատրիարքարանին մէջ գիւանատուն մի պիտի հաստատուի որոյ գործն պիտի ըլլայ ազգային պաշտօնական գրութեանց տնօրէնութիւնն :

67. Գիւանատունն երեք գրասենեակի պիտի բաժնուի :

ա. Թղթակցութիւն, որ Պատրիարքարանէն զտեւելու գիրերուն և ի Պատրիարքարան հասած թուղթերուն կարգաւորութեանն կը զբաղի :

բ. Արձանագրութիւն, որ ազգային ժողովոց և խորհրդոց վերաբերեալ թուղթերուն կարգաւորութեանն կը զբաղի :

գ. Ազգահամար, որ ազգայնոց քաղաքային վիճակագրութեանն՝ այսինքն ծննդեան, ամուսնութեան և վախճանման վերաբերեալ արձանագրութեանց կարգադրութեանն կը զբաղի : Սոյն գրասենեակէն կտրուին ազգայնոց թէ՛ ճամբորդութեան համար և թէ՛ առեւարական գործադրութեանց համար պէտք եղած վաւերական թուղթերն, նաեւ ծննդեան, ամուսնութեան և վախճանման վկայականներն :

68. Թղթակցութեան գրասենեակն՝ ներքին և արտաքին թղթակցութեանց և թուրքերէն գրութեանց համար պէտք եղածին շտաբ

դիւանագ պիւրներ պիտի ունենայ : Այս գրասենեակին Պատրիարքին հրամանին ներքեւ է եինք կանուանէ : ասոր անդամներն քաղաքական ժողովին հաւանութեամբն :

Արձանագրութեան գրասենեակին վեց դիւանագ պիւր պիտի ունենայ . երկուքն Արձեական ու քաղաքական ժողովներուն գործոցն յատկացեալ , և չորսն՝ չորս Տեսուչ խորհրդներուն գործոցն կարգեալ :

Այս գրասենեակին անդամներն՝ ամեն մէկն իր վերաբերած ժողովին կամ խորհրդին հրամանին ներքեւ է , զորոնք նոյն ժողովներն կամ խորհրդներն կրնարեն և Պատրիարքն կանուանէ քաղաքական ժողովին հաւանութեամբն :

Ազգահամարի գրասենեակին պիտի ունենայ նոտար մի , զոր քաղաքական ժողովն կրնարէ և Պատրիարքն կանուանէ :

Այս գրասենեակներուն անդամներուն թիւն ըստ հարկին կաւելնայ կամ կպակսի :

69. Դիւանատունն պիտի ունենայ դիւանագետ մի որ Դիւանատան ըստ գործոցն անօրէն և պատասխանատու է , զոր քաղաքական ժողովն կրնարէ և Պատրիարքն կանուանէ :

Դիւանագետն կրնէ ընդհանուր ժողովին դիւանագ պրութիւնն :

70. Դիւանագետն պարտաւորեալ է տարին անգամ մի Պոլսոյ ամեն մէկ թաղէն և հինգ տարին անգամ մի ամեն մէկ գաւառէն իրենց

ազգահամարին, այսինքն՝ ծննդոց, ամուսնութեանց և վախճանմանց տօմարներուն օրինակներն պահանջել և ազգային Ղիւանատան ընդհանուր ազգահամարին մէջ արձանագրել տալ :

71. Ղիւանապետն ազգային լեզուն քաջ գիտցող և տաճկերէնի ու ֆռանսերէնի բաւական հմտութիւն ունեցող անձ մի պէտք է որ ըլլայ : Նմանապէս Ղիւանադպիրներն ազգային լեզուն քաջ գիտցող և իրենց մասին մէջ հմուտ անձինք պէտք է որ ըլլան :

72. Ղիւանադպիրներն մասնաւորապէս պատասխանատու են իրենց վերաբերած ժողովին կամ խորհրդին առջեւ և ընդհանրապէս Ղիւանապետին առջեւ :

73. Ազգահամարի գրասենեակէն արուած սր և է թուղթ և վկայական՝ պատրիարքական կնքով և Ղիւանապետին ստորագրութեամբն վաւերացեալ պէտք է ըլլան :

74. Ազգային Ղիւանատունն ամեն օր՝ ութն ժամ բաց և Ղիւանադպիրներն ներկայ պիտի գանուին բաց ի տօնելի օրերէն : Եթէ տօնելի օր մի ժողով կամ խորհուրդ ըլլալ պատահի, նոյն ժողովին կամ խորհրդին Ղիւանապետն նոյն օրն ներկայ պէտք է գանուի :

2. ԳԱԼԱՏՈՒՅԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ւ. Գալատական ընդհանուր ժողով :

75. Գալատներու մէջ ընդհանուր ժողով կկազմուի Թաղական և Թեմական երեսփոխաններէ, որոց անդամակից են նախ՝ գալատափն Արօնական և Քաղաքական ժողովներուն անդամներն ու Թաղական խորհրդներուն ատենապետներն, երկրորդ՝ Ազգին կամ տեղական իշխանութեան ծառայութեանցն մէջ գլխաւոր պաշտօնով մի պատուեալ անձինք (Տե՛ս Յօդ. 9) :

76. Գալատական ընդհանուր ժողովներուն պաշտօնն է՝ իւրաքանչիւրն իր գալատափն կողմէն երեսփոխանութեամբ գալատափն առաջնորդն ընտրել, Արօնական ու Քաղաքական ժողովներն կարգել, անոնց վարչութեանն համարաւորլալ, ընդհանրական և գալատական ծանր կամ ընդհանրական գործերն անօրինել :

բ. Առաջնորդ :

77. Առաջնորդն Գալատական ժողովներուն նախագահն է և անոնց գործադիր իշխանութիւնն կվարէ :

Իր պարտաւորութիւնն է՝ գալատափն մէջ ազգային Սահմանադրութեան գործադրութեանն հսկել :

78. Առաջնորդն չպիտի կարենայ վանքերու

մէջ բնակութիւնն հաստատելով իր պաշտօնին գլխէն հեռանալ . այլ գաւառին գլխաւոր քաղքին մէջ ազգային Առաջնորդարանն պիտի բնակի, ուր կգումարութիւն և գաւառական ժողովներն :

79. Առաջնորդն գաւառական սնտուկէն իրենն յատկացեալ ամսական մի պէտք է ունենայ և Առաջնորդարանին ներքին մատակարարութեան ծախքն իր վրայ ըլլայ :

Կ. Գաւառական ժողովք եւ խորհուրդք :

80. Գաւառացի Արօնական ու Քաղաքական ժողովներն՝ ըստ տեղւոյն չէն մինչեւ 12 անդամներէ կբաղկանան :

81. Գաւառացի Թաղական և Թեմական խորհրդներն ըստ տեղւոյն Յէն մինչեւ 9 անդամներէ կբաղկանան :

82. Ամեն գաւառ իր Քաղաքական ժողովին հսկողութեանն ներքեւ մէյմէկ գաւառական սնտուկ պիտի ունենայ գաւառին ազգային եկամտից և ծախուց անտեսութեանն ու համարակալութեանն համար . նմանապէս ամեն Թաղ և Թեմ իր սնտուկն պիտի ունենայ :

Այս սնտուկներուն համարակալութիւնն կանոնաւոր կերպով պիտի կատարուի :

83. Գաւառներու մէջ ամեն Առաջնորդարան իր գաւառական դիւանատունն պիտի ունենայ . նմանապէս ամեն Թաղ և Թեմ :

Գաւառական դիւաններն պարտաւոր են գաւառին Թաղական և Թեմական ազգահամարներն ժողովել և անոնցմէ գաւառական ընդհանուր ազգահամար կազմել :

Ք Լ Ո Ւ Խ Բ .

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Տ Ո Ւ Ր Ք

84. Ամեն ազգային անհատ՝ որ չափահաս է և վատակի տէր, պարտաւոր է ազգային պիտոյից պահանջած ծախքերուն մասնակից ըլլալ . բաց անոնցմէ որոնց կարողութիւն չունենայն իրենց Թաղին կամ իրենց արհեստակցաց կողմէն վկայեալ է :

85. Ազգային տուրքն տարեկան է և բաշխման հիմ պիտի բանուի խրաքանչիւրին կարողութիւնն :

86. Արկու կերպ է ազգային տուրքն . մէկն ընդհանուր՝ որ ընդհանուր ծախուց յատկացեալ է և կհաւքուի Արդրոնական վարչութեան կողմէն ազգային սնտուկին համար, և միւսն մասնաւոր՝ որ մասնաւոր ծախուց յատկացեալ է և կհաւքուի Թաղական խորհրդոց կողմէն Թաղական սնտուկին համար :

87. Պոլսոյ մէջ ընդհանուր տուրքին բաշխման ու հաւարքման եղանակն Քաղաքական Ժողովին մէջ կորոշուի և ընդհանուր Ժողովով


կհաստատուի : Իսկ Թաղական տուրքն ամեն
Թաղ իր խորհրդին մէջ կորոշէ ու կհաստատուի :

Սոյնպէս կանօրինութիւն և գաւառներուն մէջ
գաւառական ընդհանուր տուրքն ու Թաղա-
կան մասնաւոր տուրքն :

88. Գաւառներն մասնակից պիտի ըլլան ազ-
գային ընդհանուր տուրքին :

Գաւառներուն կողմէն ազգային կեդրոնա-
կան սնտուկին արուելու մինչեւ ցարդ սովո-
րութիւն եղած տարեկան տուրքին փոխարէն՝
գաւառական սնտուկն իր հաւաքած գաւա-
ռական ընդհանուր տուրքին հարկերին այսքան
պիտի տայ ազգային կեդրոնական սնտուկին :

Հարկերին հրքան արուելն Պօլսոյ Քաղաքա-
կան Ժողովն պիտի որոշէ :



Գ Լ Ո Ւ Խ Գ .

Ը Ն Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

=

Ծ . Ընտրական որոշք :

1 . Ընտրութեան դրոշմն :

89. Ընտրելու իրաւունքն՝ լման 25 տար-
ւոյ հասակէն կսկսի :

90. Ընտրելու իրաւունքէն զրկեալ կամ

արգիլեալ են դատաստանապէս .

Նախ՝ քրէական յանցանօք դատապարտեալ և հրապարակաւ նշաւակեալ անձինք , որոնք մեռեալ են քաղաքականապէս ըստ օրինաց Տէրութեան :

2^ր՝ Ազգային գործոց մատակարարութեանն մէջ նենգութեամբ բռնուած և ազգային ատեանի մի կողմէն դատապարտութիւն կրած անձինք , որոնց համար դատող ատեանն ազգային գործոց մէջ չգործածուիլն վճռած ըլլայ :

3^ր՝ Տէրութեան կողմէն զգաստացուցիչ պատիժ կրած կամ ազգային զգաստարանէն ելած անձինք , որոնց ազգային ատեան մի արգիլած ըլլայ ընտրելու իրաւունքն : Այս արգելքն կվերնայ երբոր այսպիսեաց կատարելապէս զգաստացեալ ըլլալն արգիլող ատեանին կողմէն վկայուի :

4^ր՝ Խելագարութեան պատճառով անբաւական դատեալ անձինք , որոնց կատարելապէս առողջացեալ ըլլալն վաւերական կերպով վկայեալ չըլլայ :

5^ր՝ Հարկ եղած ազգային տուրքն կարողութիւն ունենալով մերժող անձինք , որոնք ազգովին եպերելի են իբր ազգային պարտեաց զանցառու : Այս արգելքն կվերնայ երբ այսպիսիք ազգային այս անհրաժեշտ պարտականութիւնն ճանաչել սկսին :

91. Ազգային գործոց անօրէնութեանն մէջ որոշողական ձայն ունենալու իրաւութիւն լման 30 տարւոյ հասակէն կտկտի :

Ամենայն անհատ ազգային՝ օրենստուն տարին ըացուցած է և չէ դատաստանապէս զըրկեալ կամ արգիլեալ ազգային իրաւանց վայելու մէն, ընտրելի է ազգային օր և է պաշտօնի համար :

Ք. Ընտրութիւն ազգային Երեսօրհանաց :

92. Ընտրութեան հիմ պիտի բռնուի բնակչաց թիւն :

Պօլսոյ ամեն մէկ թաղին և ամեն մէկ գաւառին ընկած երեսօրհաններուն բաշխման ցուցակն յատուկ պատկերով պիտի նշանակուի :

Երեսօրհանաց բաշխման ցուցակն՝ ամեն հինգ տարին անգամ մի կնորոգուի, ազգային Գիւանատան ընդհանուր ազգահամարին համաձայն :

Այս վերանորոգումն՝ Ղարչութեան գլխաւոր անդամոց, այսինքն Արօնական ու Քաղաքային Ժողովոց ատենապետներուն և Տեսուչ ու Մատակարար խորհրդոց ատենապետներուն մէկ տեղ գալովն ձեւացած Համախորհուրդ Ժողովին մէջ կըլլայ :

93. Թէ Պօլսոյ թաղերէն և Թէ գաւառ-

ներէն ուզուած երեսփոխաններն հարկ չէ որ
ընտրող Թաղին կամ գաւաաին բնակիչներէն
ըլլան, բաւական է որ Պօլսոյ մէջ բնակին,
և ազգասիրութեան ու պատուաւորութեան
մասին ընտրողաց համարումն ստացած անձինք
ըլլան:

Այս երեսփոխաններն չէ թէ զիրենք ընտ-
րող Թաղին կամ գաւաաին երեսփոխաններն
կսեպուն ընդ հանուր ժողովին մէջ, այլ Ազ-
գին երեսփոխաններն են համազօր իշխանու-
թեամբ:

Ընդհանուր Ժողովներ:

94. Ընդհանուր ժողովին լուծուելու օրէն
երկու ամիս առաջ գաւաաներուն և մէկ ամիս
առաջ Պօլսոյ Թաղերուն կժանուցանէ Պատ-
րիարքն՝ ամեն մէկ Թաղէն կամ գաւաաէն ուզ-
ուած երեսփոխանաց թիւն, և կհրաւիրէ
ընտրողական ժողով գումարել, յիշելով ընտ-
րելութեան պայմաններն ու ընտրութեան կա-
նոններն:

Այն կոնդակին օրինակն Թաղական խորհրդ-
դարանին մէջ բացադրեալ կմնայ մինչեւ ընտ-
րութեանց աւարտումն:

95. Ամեն Թաղի մէջ ընտրողական ժողով-
ներ կկազմուի Թաղին բնակիչներէն՝ երեսփո-
խանաց հետ անգամակից ըլլալու արժանաւո-
րութիւննին արդէն վկայեալ (Տես Եօդ. 9)

և ընտրողութեան պայմաններն ունեցող անձանցմէ :

Մտրողական ժողովն 21 հոգիէ կբաղկանայ . երեւե թաղի մի մէջ վերոյիշեալ անձինքն այս թիւն չլեցնեն , պահասն նոյն թաղին մէջ էն շատ տուրք տուող ընտրողացմէ պէտք է լեցնել :

Մտրողական ժողովին նախագահ՝ եկեղեցւոյն քարոզիչն կամ անոր բացակայութեանն՝ աւագերէցն է . իր դիւանն կբաղկանայ մէկ աւտենապետէ , մէկ ատենադպրէ և երեք քննիչներէ :

Մտրողական ժողովն թաղական խորհրդին հետ միանալով կնախագահէ ընտրական գործողութեանց :

96. Մտրողական ժողովն ըստիւնաց շանկ մի կպատրաստէ ուղուած երեսփոխաններու թիւէն եռապատիկ աւելի՝ ընտրողաց որոշումն դիւրացնելու համար :

Սոյն ցանկն ալ բացադրեալ կմնայ թաղական խորհրդարանին մէջ , իսկ ընտրողք ոչ մէկ կերպով ստիպեալ են այս ցանկին հետեւելու :

97. Մտրողական ժողովներն՝ ամեն մէկն իր թաղին մէջ՝ ընտրողութեան պայմաններն ստուգելով՝ ըստիւնաց շանկ մի պիտի պատրաստեն այբուբենի կարգով . այս ցանկն ութն օր բաց պիտի մնայ թաղական խորհրդարանին մէջ , որպէս զի թաղին ընտրողներն կարենան

իրենց անուանն վրայ գիտողութիւն ունին նէ՛ ընել :

98. Ինտրոդական ժողովն ամեն մէկ ընտրողի մէյմէկ ընտրուագիլ պէտք է տայ սոյն օրինակ .

Ա . . . ընտրող :

Ա . . . (անուն Գուրն) :

և ընտրողական ժողովին կողմէն ստորագրեալ .

Առանց այս ընտրողագիրն ներկայացնելու նչ ոք պիտի կարենայ քուէտուփին մերձենալ .

99. Լթէ ընտրութեան հրաւերն՝ որ և է պատճառով Պատրիարքին կողմէն չըլլայ (Տե՛ս Զօգ . 94) ազգային վարչութեան կողմէն պէտք է որ ըլլայ Քաղաքական ժողովին ատենապետին ձեռօք :

Լթէ ազգային վարչութիւնն ալ զանցառութիւն ընէ իր այս պարտականութիւնն կատարելու , և ընտրութեան համար Սահմանադրութեան որոշած ժամանակն հասած ըլլայ , այն ատեն ընտրողներն իրաւունքնին վարելով լիակատար իշխանութեամբ կժողովուն իրենց թաղին կամ թեմին եկեղեցւոյն խորհրդարանն և ընտրողական ժողով կազմելով կընտրեն իրենց երեսփոխաններն ըստ ընտրական կանոնաց :

Երբոր այս կերպով երեսփոխանաց մեծագոյն մասին ընտրութիւնն ըմնայ , անմիջապէս լուծեալ է ըստ օրինի հին ընդհանուր ժողովն

և գուրկ ամենայն իշխանութենէ : , ուստի և
ինչ որ գործէ կամ գործած է նոյն կէտէն աւ-
դին , ապօրինաւոր է և ապազօր իբրեւ շեղ-
եալ :

Քուէարկութիւն :

100. Ընտրողաց ցանկին բացուելէն շա-
բաթ մի ետքն՝ կիրակի առաւօտ ժամերգու-
թեան աւարտումէն ետեւ՝ Թաղական խորհրդ-
դարանին մէջ քուէարկութեան կսկսուի սա-
պէս :

Ընտրողական ժողովին նախագահն ընտրողաց
ցանկն ձեռքն առած կարգով կկոչէ ընտրող-
ներն որոնք ընտրողագիրնին կզնեն սեղանին
վրայ և ընտրողաց ցանկին մէջ իրենց անուանն
առջեւ ստորագրելէն ետքն՝ հոն Թուղթի մի
վրայ քանի երեսօփոխան ուզուած է նէ՝ այն-
քան անձի անուն կգրեն իրենց ձեռքովն վե-
րէն ի վար կարգով և ամեն մէկ անուան առ-
ջեւ մականուն , բնակութիւն , արհեստ նշա-
նակելով Թուղթն կծալեն քուէտուփին մէջ
կձգեն :

101. Քուէարկութիւնն գաղանի է . ուս-
տի պէտք է որ քուէարկուբ առանձին կեր-
պով մի գրեն իրենց քուէթուղթն , որպէսզի
ուրիշ մի չկարենայ տեսնել գրուած անուն-
ներն :

102. Վրուէարկութիւնն սկսած օրն պէտք է լմննայ :

Ընտրողացմէ ով որ այն օրն քուէարկութեան շնորհայանայ՝ իրաւունք չունի ետքն բողոքելու :

103. Ոչ ոք պիտի կարենայ միանգամայն երկու թաղի կամ գաւառի մէջ քուէ տալ :

104. Ստացեալ թաղերն ու թեմերն՝ եթէ իրարու մօտ ըլլան, մէկ տեղ գալով կրննեն քուէարկութիւնն, իսկ եթէ հեռի ըլլան՝ իւրաքանչիւրն զառ զառ քուէարկութիւն կրննեն ու ետքն քուէարկութեանց արդիւնքն կմիացնեն :

Քուէհամար :

105. Վրուէարկութիւնն լմննալէն ետքն նոյն օրն միևնոյն նիստին մէջ ընտրողական ժողովին հսկողութեանն ներքեւ տուփն կբացուի . քրննիչներն քուէներն կհամրեն և քուէարկուաց թիւին հետ կբաղդատեն . եթէ տարբերութիւն գտնուի կամ եղած տարբերութիւնն աննշան ըլլայ, այսինքն՝ մէկ կամ երկու թիւի (վասնզի կրնայ պատահիլ որ քուէարկուացմէ մէկ կամ երկուքն մոռցած ըլլան ընտրողաց ցանկին մէջ ստորագրելու), քուէարկութիւնն վաւերական կհամարուի . իսկ եթէ երկուքէն աւելի ըլլայ տարբերութիւնն և ընտրողական ժողովն խարդախութեան կասկած ունենայ, դարձեալ քուէարկութիւն ընել կտ-

բոշէ միւս օր մի մինչեւ առաջիկայ կիրակին :

Նմանապէս եթէ ուղուած երեսփոխանաց
Թիւն չեցուի առաջին անգամին՝ մնացածին
համար երկրորդ անգամ ընտրութիւն կըլլայ
ուրիշ օր մի :

106. Նթէ պատահի որ մէկն պէտք եղա-
ծէն աւելի թուով անուն գրած ըլլայ իր քուէ-
թուղթին մէջ, նոյն թիւէն ետքն եկած ա-
նուններն անընդունելի են :

Նմանապէս վերէն ի վար կարգով չգրուած
անուններուն քուէթուղթն անհամարելի է :

107. Քուէարկուաց թիւին կէսէն աւելի
քուէ ստացողներուն մէջ էն շատ ստացող ան-
ձինքն երեսփոխան ընտրուած են :

108. Նթէ մէկ կամ երկու անգամով առա-
ւելութիւն շտացուի, ընտրողական ժողովն
կծանուցանէ էն շատ առաւելութիւն ստացող
երկու անուններն, և երրորդ քուէարկու-
թիւնն օրինաւորապէս այն երկու անուանց
վրայ կըլլայ :

109. Նթէ հաւասար քուէ պատահի երկու
անձանց վրայ, երիցագոյնն ընտրեալ է :

Վո-ւր-ոյ-ն ըտր-իւնց :

110. Նմեն ընտրողական ժողով իր թաղէն
կամ գաւառէն ընտրուած երեսփոխանաց ա-
նուններն քաղաքական ժողովն կներկայացնէ
Պատրիարքին ուղղեալ տեղեւոյնով մի, որոյ

մէջ պէտք է ճշդիւ նշանակուած ըլլայ քուէ-
թուղթին օրինակն , այսինքն՝ ընտրեալին ա-
նունն , մականունն , բնակութիւնն ու ար-
հեստն և քուէարկութեան բոլոր պարագայ-
ներն :

Քաղաքական ժողովն՝ քուէարկութեանց
տեղեկագիրներն քննելով , կստուգէ երեսփո-
խանաց իշխանութիւնն :

Այս ստուգութենէն ետքն Պատրիարքն պաշ-
տօնական կերպով իմաց կուտայ նորընտիր երես-
փոխանաց և կհրաւիրէ զանոնք ընդհանուր ժո-
ղով գումարել որոշեալ օր մի :

111. Ընդհանուր ժողովն իր առաջին նիս-
տին մէջ Քաղաքական ժողովին քննած տեղեկա-
գիրներն մտիկ ընելով՝ ընտրութեանց ստուգու-
թիւնն կվաւերացնէ և երեսփոխանաց իշխա-
նութիւնն հաստատելով իր կազմութիւնն կը-
րացնէ :

112. Ընդհանուր ժողով կրնայ գումարուել
երբ երեսփոխանաց մեծագոյն մասն՝ որ Պօլսոյ
մէջ է՝ ընտրուած ըլլայ , առանց սպասելու
ընտրութեանց վերջին կամ գաւառական երես-
փոխանաց՝ որոնց ընտրութեան լուրն մէկ կող-
մէն Պօլիս հասնելու վրայ կըլլայ :

113. Աթէ մէկն քանի մի թաղերու կամ
քանի մի գաւառներու կողմէն ընտրուած ըլ-
լայ , ինքն կորոշէ որ թաղին կամ որ գաւա-
ռին երեսփոխանութիւնն ընդունիլն : Աթէ

Ասթուղիկսէն ձեռնադրեալ կամ անկէ իբր
Էջմիածնայ եպիսկոպոս ընդունեալ անձ մ' ըլլայ
և Օսմանեան Տէրութեան հպատակ :

116. Կրօնական ու Քաղաքական ժողովներն
խառն ժողով կազմելով ընտրելու թեան պայման-
ներն ունեցող եպիսկոպոսաց և վարդապետաց
արժանիքն կ'քննեն թէ՛ կրօնական և թէ՛ քա-
ղաքական մասին և կորոշեն երեք ընտրելի, ու-
րօնց անուններն ընդհանուր ժողովին կը-
ներկայացնեն :

Ընդհանուր ժողովին մէջ այն երեք ընտրելի
անձանց վրայ դադարնի քուէարկութիւն ըլլալով
նով որ մեծագոյն մասին հաւանութիւնն ստա-
նայ, անի կըլլայ օրինաւոր Պատրիարք Ազգին :

Եթէ առաջին անգամին մեծագոյն մաս
չվատակուի, երկրորդ անգամ քուէարկութիւն
կըլլայ. եթէ երկրորդին ալ չյաջողի, երկու-
առաւելագոյն քուէ ստացողաց անուններն կը-
ծանուցուի դիւանին կողմէն և երրորդ քուէ-
արկութիւնն օրինաւորապէս այն երկուքին վրայ
կըլլայ :

Եթէ պատահի որ քուէներն երկու անձի վրայ
հաւասարապէս բաժնուին, այն ատեն երկու-
քին մէկն զիջակով կընտրուի :

Եթէ ընտրեալն վարդապետ ըլլայ, անմիջա-
պէս Էջմիածին կղբկուի եպիսկոպոս ձեռնադր-
ուելու համար :

117. Ընտրութիւնն ըննալէն ետքն տեղե-

կազիր մի կշինուի զոր բոլոր բազմականք կըստորագրեն, և որոյ օրինակն՝ Ընդհանուր ժողովին կհքովն կհքեալ՝ խառն ժողովին միջնորդութեամբն Բարձրագոյն Դրան կմատուցուի որ կանուանէ զՊատրիարքն :

118. 'Նորընտիր Պատրիարքն՝ դեռ Բարձրագոյն Դրան չներկայացած՝ Եկեղեցւոյ մէջ և Ընդհանուր ժողովին առջեւ հանգիստուոր ուխտ կընէ սոյն օրինակ . " Առաջի Աստուծոյ և առաջի Ազգիս Հայոց՝ ներկայացեալ ընդհանուր ժողով՝ ուխտեմ հաւատարիմ մնալ Ազգային Սահմանադրութեան և հսկել բոլոր սրախ նորին անթերի գործագրութեան " :

119. Եթէ Պատրիարքն Սահմանադրութեան դէմ պակասութեան մի մէջ գտնուի, ամբաստանութեան տակ կընկնի :

120. Պատրիարքին վրայ ամբաստանութիւն մի կամ ազգային երեսփոխանաց կողմէն, կամ Արօնական ժողովին և կամ Բաղարքական ժողովին կողմէն կրնայ ըլլալ :

Երբ այսպիսի ամբաստանութիւն մի պատահի, Ընդհանուր ժողովն կգումարուի և իր մէջէն քննիչ յանձնաժողով մի կկարգէ 21 հոգիէ բաղկացեալ (7 եկեղեցական, 7 Թաղական երեսփոխան, 7 գաւառական երեսփոխան) որոնք ամբաստանողաց մէջէն պէտք չէ որ ըլլան :

Քննիչ յանձնաժողովն՝ ամբաստանութիւնն քննելով, աեղեկագիր կուտայ Ընդհանուր

ժողովին որ դադանի քուէարկութեամբ կորս-
 շէ խնդիրն : Եթէ այս որոշումն՝ որ ստորագ-
 րեալ պէտք է ըլլայ որոշման կողմն քուէ
 տուող ժողովականներէն, Պատրիարքի հրաժա-
 րումն վճռած ըլլայ, երկու ժողովոց աստե՛նա-
 պետներն Պատրիարքին կներկայացնեն որ յայն-
 ժամ Ազգին որոշ կամքն տեսնելով հրաժարա-
 կանն տալու պարտաւորեալ է :

121. Հրաժարեալ Պատրիարքն վիճակաւ որ
 եպիսկոպոսաց կարգն կանցնի և ըստ այն կանո-
 րինուի խառն ժողովին կողմէն :

Կ. Ընտրութիւն Առաջնորդաց :

122. Առաջնորդի ընտրութիւնն գաւառա-
 կան Ընդհանուր ժողովին մէջ կըլլայ նոյն և նման
 Պատրիարքի ընտրութեան :

Սոյն ընտրութիւնն գաւառական խառն ժո-
 ղովին միջնորդութեամբ վաւերական տեղե-
 կագրով կձանուցուի Պատրիարքին որ կեդրո-
 նական խառն ժողովին հաւանութեամբն կան-
 ուանէ զԱռաջնորդն :

123. Եթէ Առաջնորդն Սահմանադրու-
 թեան դէմ պահտութեան մի մէջ գտնուի,
 ամբաստանութեան տակ կընկնի Գաւառական
 ժողովոց կողմէն. և քննութիւնն ըստ 120 Յոդ-
 ուածին ըլլալով՝ դատն կեդրոնական խառն ժո-
 ղովին մէջ կտեսնուի որ ըստ պատշաճին կը-
 տնօրինէ :

Է. Ընտրութիւն Ժողովանոց և խորհրդանոց

124. Մեղահանուք Ժողովն կընարէ Արօնական ու Քաղաքական Ժողովոց անդամներն :

Քաղաքական Ժողովն կընարէ Տեսուչ խորհրդոց անդամներն բաց ի Ղաթաատանական խորհրդէն, որոյ եկեղեցական անդամներն Արօնական Ժողովն կընարէ :

Ղաթաատանական խորհրդին անդամներն 40 տարին լրացուցած և ամուսնացեալ անձինք պէտք է որ ըլլան :

Թաղին ընտրողներն կընարեն Թաղական խորհրդին անդամներն Թաղին Ընտրողական Ժողովին ներկայութեանն, ըստ ընտրական օրինաց :

Սոյնպէս կրլլայ և դաւառներու մէջ Ժողովականաց և խորհրդականաց ընտրութիւնն :

125. Մեղահանուք Ժողովն հինգ տարին անգամ մի մարտի վերջն կլուծուի և ապրիլի սկիզբն կնորոգուի :

Արօնական ու Քաղաքական Ժողովներն ու Տեսուչ խորհրդներն ամեն տարի մարտի վերջն կխտով չափ միայն կլուծուին և ապրիլի սկիզբն կնորոգուին (1) :

Թաղական ու Թեմական խորհրդներն չորս

1 Առիկ անգամն միայն Ժողովականաց և խորհրդականաց կէտն լուծուին վնասով կորչուի :

տարին անգամ մի մարտի վերջն կլուծուին և տարբիլի սկիզբն կնորոգուին :

Սոյնպէս կըլլայ և գաւառներու մէջ ժողովոց և խորհրդոց նորոգումն :

126. Ազգային երեսփոխաններն ու Թաղական և Թեմական խորհրդականներն անմիջապէս վերընտրելի են նոյն պաշտօնին համար : Իսկ Արօնական ու Քաղաքական ժողովոց և Տեսուչ խորհրդոց անդամներն՝ որ անմիջապէս վերընտրելի չեն նոյն պաշտօնին համար, ուրիշնր և է պաշտօնի համար վերընտրելի են :

Սոյնպէս է նաև գաւառներու մէջ գաւառական պաշտօնաւորաց վերընտրու թիւնն :

127. Ամեն անգամ որ Ազգային ժողովներն ու խորհրդներն նորոգուին, նորընտիր անգամոց ցանկն օրագրի միջոցով պէտք է հրատարակուի :

Գ Լ Ո Ւ Խ Գ .

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՈՒԹԻՒՆԵՔ

ԺՈՂՈՎՈՅ ԵՒ ԽՈՐՀՐԴՈՅ

ն . Պաշտօնական կանոնք :

128. Ամեն ժողով և խորհուրդ պէտք է ունենայ առեմական գիւան մի, որ կրազկանայ ա-

ատենապետէ մի, ատենադպրէ մի և պէտք եղածին շափ փոխանորդներէ, զորոնք ժողովն իր մէջէն կրնարէ :

Այլին անդամին երիցագունին ատենապետութեամբն և կրտսերագունին ատենադպրութեամբն նիստ կրնէ և իր դիւանն կկազմէ :

129. Ատենապետին պաշտօնն է՝ ատեանն բանալ և գոցել, ատեանին ներքին վարչութիւնն անօրինել, փիճաբանութիւններն ուղղել, կանոնադրութեանց պահպանութեանն հսկել և ատենաբաններուն կարգով խօսք տալ :

130. Ատենադպրին պաշտօնն է՝ ատեանին մէջ խօսուածներն գրի առնուլ, եղած որոշումներն ու արուած պատճառաբանութիւններն ճշգրիտ նշանակել, և ատենադրութիւնն հետեւեալ ատեանին ներկայացնել, և ամեն ատեանին խնդիրներու ցանկն պատրաստել առաջնութեան կարգով :

131. Ատենապետի ու ատենադպրի փոխանորդներուն պաշտօնն պիտի ըլլայ անոնց ներկայ չգտնուած ատեաններուն մէջ զանանք փոխանակել :

132. Ատենակիան դիւանն տարին անգամ մի կնորոգուի և անդամներն անմիջապէս վերընտրելն են :

Ընդհանուր ժողովին դիւանն 5 տարին անգամ մի ընդհանուր ժողովին հետ կնորոգուի :

Ի. Ատենուի կանոն :

133. Կրօնական ու քաղաքական ժողովներն ու Տեսուչ խորհրդներն շարաթն անգամ մի կգումարուին ի Պատրիարքարան որոշեալ օր մի :

Ատենապետներն կրնան ուրիշ օր մի կամ ուրիշ տեղ մի արտաքոյ կարգի ժողով կամ խորհուրդ գումարել առիպողական պարագայի մէջ :

Ինդհանուր ժողովին գումարուելու օրն լրագրի միջոցով պէտք է ծանուցուի գոնէ երեք օր առաջ :

134. Ասանց մեծագոյն մասի ներկայութեան նիստն անբաւական կհամարուի և ինդրի մի վրայ վերջին որոշում չի կրնար տրուիլ :

135. Ասանց ատենապետի և ատենագրի ատեան չի կրնար բացուիլ :

Երբ մեծագոյն մասն ներկայ ըլլալով ատենապետն կամ ատենագիրն և անոնց փոխանորդներն ներկայ չըլլան, երիցագունին ատենապետութեամբն ու կրտսերագունին ատենագրութեամբն կբացուի ատեանն :

136. Ատենապետէն խօսք չիսնդրած և չառած ներելի չէ խօսիլ ատեանի մէջ :

137. Ինդիր մի առաջարկել ու զողն՝ նախ ինդիրներուն ցանկին մէջ պէտք է գրել տայ ինդիրն ու իր անունն, և երբ կարգն գայ, այն ատեն իրաւունք ունի խօսելու նոյն ինդրին վրայ և ժողովն զանի մասի ընելու պարտաւոր է :

Այս կարգն այն ատեն միայն կրնայ փոխուիլ՝ երբ ուրիշ խնդիր մի պատահի որոյ ստիպողական ըլլալն ժողովն որոշէ :

138. Խնդիր մի լաւ մի քննուելէն, վիճուելէն և անոր վրայ ամենուն կարծիքն առնուելէն ետքն պէտք է որ քուէի գրուի, և որոշումն ներկայ գտնուող անդամներուն մեծագոյն մասին հաւանութեամբն կարուի :

139. Երբ ձայներն հաւասար զան՝ եթէ նախագահն ներկայ է՝ նախագահին կողմն կհակի որոշումն, եթէ ոչ՝ ատենապետին կողմն :

140. Իսսան ժողովին մէջ խնդրի մի որոշում տալու համար պէտք է որ երկու ժողովներն զառ զառ քուէարկութիւն ընեն. երբ երկուքին ալ մեծագոյն մասն մի և նոյն որոշումն բրած ըլլայ՝ խնդիրն կլուծուի. իսկ հակառակ դիպուածի մէջ անհամաձայնութիւն կսեպուի երկու ժողովոց մէջ, և անօրէնութիւնն ընդհանուր ժողովին կմնայ (Տե՛ս Զօգ. 1, 12) :

141. Ժողովներուն մէջ որ և է ընտրութիւն, գառաստան, ազգային տուրքի հաստատութիւն, Սահմանադրութեան վերաքննութիւն, գաղանի քուէարկութեամբ կորոշուի. նոյնպէս կրլայ նաև ուրիշ որ և է խնդրի մէջ երբ գաղտնի քուէարկութիւն պահանջող ըլլայ :

142. Խորհրդոց ատենապետներն կրնան մինակ կամ ըստ հարկին խորհրդական մ'ալ հետ առնելով ուզած ատեննին Քաղաքական Ժո-

ղովին մէջ ներկայանալ և իրենց խորհրդին վերաբերեալ գործերուն վրայ խօսիլ, քայց քուէ շունին :

143. Ճողովներու և խորհրդներու մէջ ամեն նիստ իր ատենագրութիւնն պէտք է ունենայ, զոր ներկայ գանձուող անդամներն կատարագրեն :

Բնդհանուր ժողովին ատենագրութիւններն Պատրիարքն ու գիււանին անդամներն միայն կատարագրեն :

Բնդհանուր ժողովին անդամներն ներկայութեան իրարմէ մի վրայ կատարագրեն ժողովարանն մտած ատեններն :

144. Ամեն ժողով և խորհուրդ իր Տեսչութեան կամ մատակարարութեան վրայ տարեկան ընդհանուր տեղեկագիր պէտք է որ այս իր համարաու ժողովին կամ խորհրդին :

Այն տեղեկագիրն բոլոր անդամոց կողմէն ստորագրեալ պէտք է ըլլայ :

145. Երեք անգամ իրարու վրայ առանց բանաւոր պատճառ մի գրով իմացնելու ներկայ չգանձուող ժողովականին կամ խորհրդականին անունն ատենագրութեան մէջ կ'ընդունի, և ժողովին կամ խորհրդին կողմէն ատենապետն անոր կգրէ չգալուն պատճառն հարցնելու համար. եթէ պատասխան չընդունի ժողովն, կամ ընդունած պատասխանն զինքն դո՛հ չընէ, երկրորդ գրութեամբ ժողովին դատումն կ'իմացնէ անոր և կ'որդորէ որ յաջորդ ատեանին ներկայ

դանուի. Եթէ նորէն շնորհայանայ, այնպիսին իր ազգասիրական պարտուցն մէջ զանցառութիւնը բրան ըլլալով, իր զանցառութիւնն՝ հրաժարական կսեպուի. եթէ այսպիսեաց թիւն մինչեւ Յ հասնի, ժողովին նախագահն կամ առենապետն անոնց տեղ զանոնք ընտրող ժողովէն ուրիշ անդամներ կխնդրէ (1) :

Նոյնն պէտք է ընէ երբ նոյն Թուով ժողովականք կամ խորհրդականք պակսին թէ վախճանման և թէ հրաժարման պատճառով :

Գ Լ Ո Ւ Խ Ե .

ՎԻՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

146. Սահմանադրական ժողովով որոշեալ Ազգային Սահմանադրութիւնն առաջին անգամ առժամանակեայ ընդհանուր ժողովով կրնդ ունուի ու կստորագրուի, և յետոյ սահմանադրականապէս կազմեալ ընդհանուր ժողովն դարձեալ ստորագրելով Ազգին կողմէն կվաւերացնէ զանի և վճարբար կհաստատէ :

Սահմանադրութեան ստորագրեալ բնագիրն ազգային Գիւմնատան մէջ կպահուի և օրի-

1 Այս սահմանադրութիւնը ընդհանուր ժողովին վերաբերեալ չէ :

նակն տպագրութեամբ կհրատարակուի :

147. Ազգային Սահմանագրութիւնն ազգովին ընդունուելէն ետքն՝ Ազգին որոշուած յայանի կամքն կսեպուի, և անոր պարունակած արամագրութիւնքն անփոփոխելի են ազգային Վարչութեան կողմէն :

Իսկ՝ երբ ազգային Վարչութիւնն Սահմանագրութեան գործադրութեանն մէջ երկար փորձով ինչ ինչ յօդուածներու փոփոխութեան պէտք տեսնէ, ինք միշտ համեմատ վարուելով անոնց, իր ընթացքին երրորդ տարւոյն վերջերն միայն քննութեան առաջարկութիւն կըրնայ ընել ընդհանուր ժողովին :

148. Երբ ընդհանուր ժողովն վերաքննութեան առաջարկութիւնն ընդունի, Վերաքննութեան ժողով մի կկազմէ սա՛ կերպով :

Կրօնական և Քաղաքական ժողովներէն չորսական հոգի, Տեսուչ խորհրդներէն երեքական հոգի, և ասանցմէ դուրս 10 հոգի զոր ընդհանուր ժողովն իր մէջէն կամ դուրսէն կընտրէ, ընդ ամէնն 30 հոգի :

149. Վերաքննութեան ժողովն ազգային Վարչութեան կողմէն եղած գիտողութիւններն միայն քննութեան տակ առնելով, պէտք եղած փոփոխութիւններն կորոշէ և Պատրիարքին միջնորդութեամբն ընդհանուր ժողովին կներկայացնէ :

150. Սահմանագրութեան վերաքննութիւնն

Ազգին համար անընդունելի է, երբ հիմնա-
կան սկզբանց արամագրութեանցն համաձայն
չըլլայ, այն սկզբանց՝ որով ապահովեալ են
Ազգին իրաւունքներն, իրաւունք՝ որոնց վրայ
Ազգն անգամ չունի իշխանութիւն անօրէնու-
թեան, զի միանգամայն պարտիք են :

Վ Ե Մ Պ



Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ր Ե Ս Փ Ո Ւ Ա Ն Ա Յ

Պ Օ Լ Ի Ս

	Թ—չ	Են—ջոյն	Եջե—տեխանայ Բի—
1	Գուսնայարու	Մայր Եկեղեցի	24
2	"	Ս. Զարուկ Թիւն	2
3	Կեօկարաւ	Ս. Զոհաննէս	6
4	Եկեղնայարու	Ս. Պայլ աւ և Բարեբազմեաց	4
5	Սամանթիա	Ս. Գեորգ	15
6	"	Ս. Զահար	1
7	{ Կառլոսարու Մայրի գիւղ Ա.Մ' Սեպուհեաց Ա.Մ' Երզնի }	Ս. Զոհաննէս	} 2
		Ս. Սեպուհեաց	
		Ս. Աստուածածին	
		Ս. Աստուածածին	
8	Եօրդարու	Ս. Կեղնայարու	2
9	Գարաշեօկիւնի	Ս. Յ. Ոսկեքերան	1
10	Պարաւ	Ս. Հրեշտակապետ	15
11	Ե՛նիւր	Ս. Աստուածածին	1
12	"	Ս. Եղիա	1
13	Խաւարիւղ	Ս. Սեպուհեաց	15
14	Գարաշեօկ	Ս. Զահար	1
15	{ Բեբա Ղարաթիւ }	Ս. Երրորդու Թիւն	} 17
		Ս. Լուսապիշ	
16	Պեշեմալ	Ս. Աստուածածին	10
17	Օրմազիւղ	Ս. Աստուածածին	14
18	{ Գուրուշեմի Հիւսիս Միւրթիւն Կորդիւղ }	Ս. Խալ	} 5
		Ս. Սեպուհեաց	
		Ս. Երեք ճանչուիչ	
		Ս. Աստուածածին	
19	{ Պեշեմալ Ղարաթիւ }	Ս. Հախիթի	} 1
		Ս. Կեղնայարու	
20	{ Գուրուշեմալ Իմաստի }	Ս. Աստուածածին	} 2
		Ս. Լուսապիշ	
21	Ուրախար (Իսպիւսար)	Ս. Կորնապետ	8
22	{ Ալեմուր }	Ս. Խալ	} 11
		Ս. Կլան	
23	Բարձրեպետ	Ս. Յայապետ	1
24	Գարաթիւ	Ս. Կլան	1

Գ Ա Ի Ա Ռ Գ

Առաջնորդական Հիճան	Երկրորդական Բի-	Առաջնորդական Հիճան	Երկրորդական Բի-
1	Էրուսաղեմ	23	Ան
2	Էդիպոս	26	Տիգրիս
3	Բեթլեհեմ	27	Մարտիրոս
4	Կնյուս Տոբան	28	Կարմիր
		29	Կանաչ
		30	Բեթլեհեմ
5	Մարտիրոս	31	Երանցի գարաջիս
6	Էրուսաղեմ	32	Սեբաստիա
7	Չիլիկա	33	Էդիպոս
8	Աստուր	34	Մարտիրոս
9	Էդիպոս	35	Աստուր
10	Տիգրիս	36	Տրապիզոն
11	Բեթլեհեմ	37	Հանիկ
12	Պարտուս	38	Էդիպոս
13	Բաղլեշ	39	Կեսարիա
14	Վան	40	Գարաջիս
15	Արթուր	41	Կարմիր
16	Կարս	42	Զինապոլիս
17	Մուշ	43	Պարտուս
18	Էրզնկա	44	Պարտուս
19	Բաղլեշ	45	Կեսարիա
20	Կարմիր	46	Ռասաթո
21	Քարթլի	47	Արթուր
22	Արթուր	48	Պարտուս
23	Բաղլեշ	49	Մարտիրոս
24	Գեղիկ	50	Վաստա

Գումարն 60

Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ն

Երկրորդական	Պարտուս	160
Երկրորդական	Գարաջիս	60
		<u>220</u>



Ս Ա Հ Մ Ա Ն Ա Գ Բ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն

Ա Ն Դ Ա Մ Ն Ե Բ Ն

ԿԵՐՍՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՍԵՐԱՍՏՈՅ :

ՅՈՂՋԱՆՆԷՍ ՎԵՐԿԱՊԵՏ
ՂԵՍԹՈՅ :

Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱԼԱՆՅՑ
ԽԱՍԳԻՂԻ :

Տ. ՅՈՂՋԱՆՆԷՍ ՔԱԼԱՆՅՑ
ՓԱՓԱԶԵԱՆ :

Տ. ՅՈՂՋԱՆՆԷՍ ՔԱԼԱՆՅՑ
ՀԻՆՔԵՆԱՐՊԷՅԷՆՏԵԱՆ :

ԱԼԹՈՒՆ ՏԻՐՐԻ :

ԱՊԹՕՆ Մ. :

ԱՀՆԱՆԵԱՆ Գ. :

ԵԱՂՈՒՊԵԱՆ Ե. :

ԻԹԻՒՃԵԱՆ Կ. Ս. :

ՄԻՆԱՍ Մ. :

ՄԻՍԱՔԵԱՆ Վ. :

ԲՈՒՍԻՆԵԱՆ :

ՍԻՐԷՆԵԱՆ Յ. :

ՏԷՄԻՐՃԻՊԱՀԵԱՆ Ե. :

ՓԷՏՏՐՄԱՀԵԱՆ Ս. :

ՔԱՅՍԷՐԵԱՆ Թ. :

ՔՈՒԹԻԿԵԱՆ Բ. :

ՕՏԵԱՆ Գ. Ս. :

Ի Ղալմիս 20 Մայիս 1860 :

Ազգային Բնդհանուր Ժողովին միա-
ձայն հաւանութեամբն ընդունուած և
ստորագրուած , ի Արատանդնուպօլիս ,
ի Պատրիարքարանն Հայոց :

24 Մայիս 1860 :



Գին 5 Ղրուշ :

Սեփեհանու թիւն Ազգային Մտաւիճն :

13356-13360

2013

